ՀՈՒՄԱՆԻԶՄԻ ՋԱՏԱԳՈՎԸ

Գ. ԱՍԱՏՐՅԱՆ, *Հումանիզմը նոր հազարամյակի հիմնախնդիրների համատեքստում, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014, 459 էջ:*


ԵՐԵՎԱՆԻ ՀՅՈՒՍԻՍՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀՈՒՄԱՆԻԶՄԻ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԳՐԻԳՈՐ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՈՒՄԱՆԻԶՄԸ
ՆՈՐ ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2014

Հյուսիսային համալսարանի գիտական խորհրդի և Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի նախագահության որոշումներով ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը վերջերս լույս ընծայեց Գրիգոր Ասատրյանի «Հումանիզմը նոր հազարամյակի հիմնախնդիրների համատեքստում» ստվարածավալ աշխատությունը: Մենագրության հրատարակումը հովանավորել է գիտությունն ու արվեստն արժևորող, իսկական մտավորական Վլադիմիր Գասպարյանը: Գիրքը մի յուրահատուկ նվեր է վաստակաշատ գիտնականի ու մանկավարժի գալիք հոբելյանին և կարծես ամփոփումն ու հանրագումարն է հումանիզմի հիմնախնդրի վերաբերյալ նրա բազում տարիների անդավաճան և բեղուն աշխատանքի: Ուսումնասիրությունը նվիրված է նոր հազարամյակի հիմնախնդիրների համատեքստում հումանիզմի քննական վերլուծությանը: Այն ունի ընդարձակ ներածություն, հինգ ծավալուն գլուխ և վերջաբան:

Ներածության մեջ Գ. Ասատրյանը փորձում է հիմնավորել հիմնախնդրի արդիականությունը, սահմանում է հետազոտության առարկան, մեթոդաբանությունը, որի հիմքում ընկած են ուսումնասիրության մի շարք փիլիսոփայական և գիտական սկզբունքներ, հստակ ձևակերպում է առաջադրված նպատակը, հիմնական խնդիրները, հակիրճ ներկայացնում հիմնախնդրի դրվածքն ու լուծումները պատմական տարբեր ժամանակաշրջաններում, թվարկում աշխատության այն նորույթները, որոնք առաջին անգամ են կիրառվել և արժևորում են այդ գաղափարների գործնական նշանակությունը:

Աշխատության առաջին՝ «Արդի հումանիզմի ակունքները» գլխում հեղինակը քննության է առնում հումանիզմի զարգացման պատմական փուլերը՝ սկսած անտիկ դարաշրջանից մինչև մեր օրերը՝ անդրադառնալով նաև հայ մարդասիրական մտքի պատմությանը: Այդ փուլերը հետազոտողը դիտարկում է ամբողջության մեջ՝ բացահայտելով դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները և հաջորդափոխության օրինաչափությունները:

Գրքի երկրորդ՝ «Օտարման» հիմնախնդրի հարցի շուրջ» գլխում գիտնականը վերլուծում է «օտարման» ֆենոմենը և նրա փիլիսոփայական-սոցիոլոգիական իմաստը, այդ թվում՝ մարքսիստական ըմբռնումը,

ներկայացնում դրա էությունը, առաջացման պատճառները, դրսևորման ձևերը և հաղթահարման ուղիները:

Երրորդ գլխում՝ «Արդի համաշխարհային հումանիստական շարժում», Գ. Ասատրյանը ուսումնասիրում է արդի համաշխարհային հումանիստական շարժման ծրագրային փաստաթղթերը՝ «Հումանիստական մանիֆեստ-I», «Հումանիստական մանիֆեստ-II», «Աշխարհիկ հումանիզմի դեկլարացիան», «Հումանիստական մանիֆեստ-2000. Նոր պլանետար հումանիզմի կոչ»:

Կրոնական ու աշխարհիկ հումանիզմի այս հիմնարար փաստաթղթերի ընդհանուր համատեքստում հեղինակը ներկայացնում է նաև հումանիզմի սահմանման հարցը, և որ ամենակարևորն է՝ գլուխն ավարտում է մեր նորանկախ հանրապետությունում հումանիստական շարժման նոր փուլի սկզբնավորման առանձնահատկությունների լուսաբանմամբ: Հետազոտության մեջ նշվում են նաև «Հումանիզմի պրոբլեմների ակադեմիա» հասարակական կազմակերպության հիմնական նպատակներն ու խնդիրները, գործունեությունը: Չորրորդ՝ «Արդի հումանիզմի դասակարգման և տարատեսակների մասին» գլխում գիտնականը, ելնելով երեք հիմնական սկզբունքներից, տալիս է մեր ժամանակներում հումանիզմի մի շարք տիպերի ու տարատեսակների դասակարգումը՝ առանձնացնելով այնպիսի տիպեր, ինչպիսիք են էքզիստենցիալ, պերսոնալիստական, էվոլյուցիոն, նոոսֆերային, էկոլոգիական, թեիստական կամ կրոնական և սոցիալական կամ քաղաքացիական հումանիզմը: Այնուհետև մանրամասն վերլուծելով դրանցից յուրաքանչյուրը՝ վերհանում է վերջիններիս արժեքավոր ու սահմանափակ կողմերը, տալիս իր գնահատականը:

Աշխատության հինգերորդ՝ «Արդի սոցիալ-տնտեսական ու քաղաքական փոխակերպումների հումանիստական չափումը» գլխում հումանիստ գործիչը կարծես մեկ անգամ ևս հիշեցնում է մեր օրերում մարդկությանը սպառնացող վտանգների ու մարտահրավերների՝ բնապահպանական հիմնախնդիրների, պատերազմների, սոցիալական անհավասարությունների, սովի ու թերսնման, անգրագիտության, միջազգային ահաբեկչության և հումանիզմին հակոտնյա նմանատիպ այլ երևույթների մասին, տալիս դրանց վերլուծությունը, մատնանշում հաղթահարման ուղիները: Ներկա դարաշրջանի գլոբալ հարցադրումների լուծման հիմնական միջոցը թերևս, ինչպես արդարացիորեն նկատում է հեղինակը, տարբեր կրոնների և քաղաքակրթությունների համագործակցությունն է, բարի կամքը, մտահոգությունը մարդկության ապագայի նկատմամբ:

Հումանիզմի հիմախնդրի մանրազնին ու հետևողական վերլուծությունը գիտնականին հանգեցնում է այն եզրակացության, որ սոցիալական սուր հակասություններով ու կոլիզիաներով լի արդի աշխարհում հումանիզմն այլընտրանք չունի: Միակ իրական ճանապարհը պատմական նոր իրողություններին, մեր դարաշրջանի ներքին պահանջմունքներին համահունչ հումանիստական աշխարհայացքի մշակումն է, հումանիզմի գաղափարների տարածումը, հասարակական բոլոր հարաբերություններում

հումանիզմի սկզբունքների ու հումանիստական նորմերի հետևողական արմատավորումը: Ընթերցելով գիրքը՝ մեկ անգամ ևս համոզվում ես Ֆոյերբախի մասին Մարքսի տասներորդ թեզիսի ճշմարտացիության մեջ, թե քաղաքացիական հասարակությանն ի վերջո պետք է փոխարինելու գա մարդկային հասարակությունը կամ հասարակայնացված մարդկությունը:

Այսպիսով, ընթերցողի սեղանին է դրվել մի գիրք, որը մեր իրականության մեջ առաջին անգամ համապարփակ ու բազմակողմանի, պարզ ու հանրամատչելի, իհարկե ոչ ի վնաս գիտականության, ներկայացնում է հումանիզմի հիմնահարցերը, փորձում է դրանք փիլիսոփայական ընդհանուր պրոբլեմների եզրագծից տեղափոխել դեպի առանցք՝ դարձնելով արդի փիլիսոփայության հիմնաքարերից մեկը: Կարծում ենք, գիրքը կհետաքրքրի ոչ միայն վերոնշյալ խնդիրներով զբաղվող մասնագետներին, այլև նրանց, ովքեր մտահոգ են ներկա դարաշրջանում մարդկությանը հուզող հիմնախնդիրներով, մարդկային քաղաքակրթության ճակատագրով: Եվ որ ամենակարևորն է՝ աշխատությունը խթան կդառնա երիտասարդ գիտնականների համար շարունակել սկսած գործը, մշակել ու հղկել մեր հազարամյակի պահանջներին ու ոգուն համահունչ հումանիստական նոր պարադիգմա, որի շնորհիվ հնարավոր է հաղթահարել կամ գոնե նվազեցնել արդի դարաշրջանի սպառնալիքներն ու մարտահրավերները:

ԹԱՆԱՆՅԱՆ Գ. Գ.